ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ՊԵՏԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 35-Լ

Թիվ 43-Լ

<<ՆԵԼԵԳԱԼ-2021>> ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԱՆՎԱՄԲ ՕՊԵՐԱՏԻՎ-ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով երրորդ երկրների քաղաքացիների անօրինական միգրացիայի հակազդմանն ուղղված <<Նելեգալ-2021>> պայմանական անվամբ օպերատիվ-կանխարգելիչ միջոցառումն կազմակերպելու և իրականացնելու մասին ՀԱՊԿ անդամ-պետությունների իրավասու մարմինների ղեկավարների անօրինական միգրացիայի դեմ պայքարի հարցերով կոորդինացիոն խորհրդի և ՀԱՊԿ քարտուղարության որոշումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1. Ստեղծել Ազգային շտաբ հետևյալ կազմով՝

- ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալ, ոստիկանության գնդապետ Արամ Կառլենի Հովհաննիսյան (շտաբի ղեկավար),
- ՀՀ ոստիկանության ՔՈ ԳՎ ՀԱՄԱԴՊՎ պետ, ոստիկանության փոխգնդապետ Ռաֆիկ Արամայիսի Պողոսյան,
- ՀՀ ոստիկանության ՔՈ ԳՎ ՀԱՄԱԴՊՎ պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Արթուր Միխայիլի Եգանյան
- ՀՀ ոստիկանության ՔՈ ԳՎ ՀԱՄԱԴՊՎ ԱՄԴՊ բաժնի պետ, ոստիկանության գնդապետ Դավիթ Բաբկենի Ավետյան,
- ՀՀ ոստիկանության ՔՈ ԳՎ ՀԱՄԱԴՊՎ ահաբեկչության և ծայրահեղականության դեմ պայքարի բաժնի պետ, ոստիկանության մայոր Տիգրան Գառնիկի Ղալիջանյան,
- ՀՀ ոստիկանության ՔՈ ԳՎ ՀԱՄԱԴՊՎ ԱՄԴՊ բաժնի պետի տեղակալ, ոստիկանության մայոր Արմեն Մարտինի Մկրտչյան,
- ՀՀ ոստիկանության ԱՎ վարչության վիզաների և օտարերկրյա քաղաքացիների հաշվառման բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Վլադիմիր Սերգեյի Քարտաշյան,

- ՀՀ ԱԱԾ ՀՀԴ 4-րդ բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ Վաղինակ Աշոտի Բաղեյան,
- ՀՀ ԱԱԾ ՍՔ ՍՎՔ պետի տեղակալ, փոխգնդապետ Արթուր Վոլոդյայի Գևորգյան,
- ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն ծառայության պետի օգնական Վարդան Ազատի Մաթևոսյան:

2. Ազգային շտաբի ղեկավարին՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքում <<Նելեգալ-2021>> պայմանական անվամբ օպերատիվ-կանխարգելիչ միջոցառման կազմակերպչական աշխատանքներն իրականացնել ՀԱՊԿ անդամ պետությունների իրավասու մարմինների ղեկավարների անօրինական միգրացիայի դեմ պայքարի հարցերով կոորդինացիոն խորհրդի կողմից առաջադրված մտահոգությանը և ալգորիթմին համապատասխան,

2) <<Նելեգալ-2021>> պայմանական անվամբ օպերատիվ-կանխարգելիչ միջոցառման առաջին փուլը կազմակերպել 2021 թվականի հուլիսի 5-ից 12-ը, երկրորդ փուլը՝ հոկտեմբերի 11-ից 18-ը

3) միջոցառման արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով մշակել օպերատիվ-կանխարգելիչ միջոցառման պլան,

4) միջոցառման ընթացքի և արդյունքների մասին պարբերաբար զեկուցել:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳՆԴԱՊԵՏ
Վ.ՂԱՋԱՐՅԱՆ

<<16>> 06 2021թ.

ք.Երևան

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ
Ա.ԱԲԱՋՅԱՆ

<<06>> 07 2021թ.

ք.Երևան